217 V. Guroian, Armenia, in: The Encyclopedia of Christianity, Vol. 1. Ed. by E. Fahlbusch..., Grand Rapids .... 1999, (125-127) 126.

218 Vgl. Seibt[179] 131: Befreiung Grigors ca. 313; Taufe Trdats ca. 315. Zögernd nur schließt sich Mahé[92] 111 der Datierung an ("Vielleicht hat sich Trdat erst dann (sc. nach dem Toleranzedikt des Galerius) zum Christentum bekehrt"). Vgl. hier Anm. 192. Im Verlagsprospekt der Österr. Akademie der Wissenschaften hieß es bereits: "Es wurde weitgehend darüber Einigung erzielt, dass eine Bekehrung des Königs Großarmeniens, Trdat/Tiridates, im traditionell angenommenen Jahr 301 unhaltbar wäre und viel eher an eine Datierung um 314 zu denken ist". In ZAC 5, 2001, 186-188 hat W. Seibt selbst über Verlauf und Ergebnisse des Symposiums berichtet.

219 Vgl. Grousset[78] 124. Grousset geriet mit dieser korrekten Beobachtung in einen unlösbaren Konflikt mit dem kurz (122) zuvor vertretenen Datum 288 für die offizielle Konversion des Königs.

220 Vgl. M. Van Esbroeck, Saint Grégoire d'Arménie et sa didascalie, Le Muséon 102, 1989, (131–145) 137. Ihm stimmt vorsichtig jetzt auch Seibt[179] 129 mit Anm. 40 zu.

221 In der jüngsten mir bekannten Publikation Van Esbroecks wird das Konzil von Neokaisareia in den Zeitraum "zwischen 314 und 320" datiert: M. Van Esbroeck, Zwei armenische Listen mit Konzilien bis zum Jahre 726, AHC 32, 2000, [264-302] 267 Anm. 13.

222 Vgl. Garsoïan[7] 455- 456.

223 So zuletzt auch Garsoïan[8] 4. Vgl. hingegen Van Esbroeck[220]145. Vgl. schon die Diskussion in meiner Habilitationsschrift[147] 88 –89.

224 Vgl. Van Esbroeck[220]133: *Il n' y a pas lieu de changer substantiellement la date de l'ordination de Grégoire. Cette chronologie donne l'année 315".* Der Text ist in meiner Habilitationsschrift[147] 89 nicht präzise paraphrasiert worden. Vgl. jetzt allerdings Van Esbroeck[221].

225 Ich nehme kein Intervall zwischen "Konversion" und (öffentlichem) "Übertritt" zum Christentum an, wiewohl dies gelegentlich geschieht.

226 Vgl. Thomson[148] lxix-lxx.

227 Als jüngste mir bekannte Arbeit zitiere ich nur P. Barceló, Constantins Visionen: Zwischen Apollo und Christus, in: Humanitas-Beiträge zur antiken Kulturgeschichte. Festschrift für Gunther Gottlieb zum 65. Geburtstag. Hrsg. v. P. Barceló und V. Rosenberger in Verbindung mit V. Dotterweich, Schriften der Philosophischen Fakultäten der Universität Augsburg. Nr. 65. Historisch-sozialwissenschaftliche Reihe, München 2001, 45-61. Vgl. auch das gehaltvolle, von E. Mühlenberg herausgegebene Werk "Die Konstantinische Wende" (Veröffentlichungen der Wissenschaftlichen Gesellschaft für Theologie 13, Gütersloh 1998).

228 Vgl. E. V. Gulbekian, The Conversion of King Trdat and Khorenatsi's *History of the Armenians*, Le Muséon 90, 1977, (49-62) 51-52. Vgl. auch die Darlegung in meiner Habilitationsschrift[147] 105-112. Wichtig vor allem ist M. Van Esbroeck, Legends about Constantine in Armenian, in: Th. J. Samuelian (Ed.), Classical Armenian Culture. Influences and Creativity, University of Pennsylvania. Armenian Texts and Studies 4, Chico 1982, 79-101.

229 Vgl. Yuzbashian[216] 166 (im Rahmen der Diskussion).

230 E. Ter-Minassiantz hatte dies in seiner Dissertation (bei A. von Harnack) am Anfang des vergangenen Jahrhunderts schon betont: Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts nach den armenischen und syrischen Quellen bearbeitet, TU N. F. XI 4, Leipzig 1904.

231 Anders Hage[66] 43.

232 So G. Winkler in einem 2001 gehaltenen Referat anlässlich der 1700-Jahr-Feier der Christianisierung Armeniens; zit. bei Halfter[145] 43.

Eine verkürzte Fassung des Beitrags trug ich am 25.1. 2002 am Institut für Klassische Altertumskunde der Universität Kiel vor. Dem Einladenden, Herrn Kollegen J. Wiesehöfer, sowie den Teilnahmern/innen an der anschließenden Diskussion möchte ich hier danken. Herr Doz. A. Luther (Berlin) hat eine frühere Fassung des Beitrags durchgelesen und wertvolle Hinweise beigesteuert. Dafür sei auch ihm sehr herzlich gedankt.

ՏԵՐ ԵՂԻՇԷ ՍԱՐԲԱՆԿԱՑՈՒ ՀՐՈՑ ԵՐԿԻՐ «ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ» ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐԱՑԱՑՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Պաւել Չոբանեան

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժե-ԺԷ դարերը համաշխարհային պատմութեան մէջ բնութագրւում են որպէս Աշխարհագրական յայտնագործութիւնների ժամանակաշրջան: Մովային համարձակ ճանապարհորդութիւնները ունեցան կարեւոր բացայայտումներ, մեծապէս ընդլայնեցին ու ճշգրտեցին մարդկութեան մինչ այդ ունեցած պատկերացումները երկրագնդի աշխարհագրական նկարագրի ամբողջական ու բազմակողմանի ուսումնասիրութեան բնագաւառում: Նման ձեռնարկումները շարունակուեցին նաեւ հետագայ ԺԷ-ԺԸ դարերում՝ առաւել հանգամանօրէն իւրացնելով ու գործնական հողի վրայ դնելով աշխարհագրական յայտնագործումների արդիւնքները: Նոր մայրցամաքի յայտնագործումն ու իւրացումը յանգեցրեց համաշխարհային սոցիալական ու տնտեսական, գիտական ու քաղաքական կարեւոր վերափոխումների: Համաշխարհային այդ գործընթացի մէջ ընդգրկուած էին այդ գործիչները, որոնք մինչ նաեւ հայազգի գործիչներ, որոնք մինչ այդ էլ կարեւոր դերակատարում ունէին Արեւելք-Արեւմուտք բազմակողմ փոխյարաբերութիւններում: Հեռաւոր ծովագնացութեանն ու աշխարհագրական յայտնագործութիւններին հայոց մասնակցութիւնը հայագիտութեան էլուսաբանուած հարցերից է:

Միջերկրածովեան աւազանի երկրների հետ հայոց յարաբերութիւնները առաւել յաճախացել էին Կիլիկեան Հայոց պետութեան ստեղծումից յետոյ: Կիլիկիայի Այաս նաւահանգիստը Արեւելքը Միջերկրածովեան աւազանի երկրների հետ կապող գլխաւոր օղակներից մէկն էր[1]:

Հայ վաճառականութիւնն ու աշխարհագրագէտ-ճանապարհորդները եւս ընդգրկուած էին աշխարհի տարբեր երկրամասերի ուսումնասիրութեան գործին, որի արդիւնքներից մէկն ու վկայութիւնն է «Անուանք քաղաքաց Հնդկաց եւ Պարսից» երկի ստեղծման փաստը դեռեւս ԺԲ դարում[2]: Քաղաքակրթական առաջընթացի գործընթացին հայազգի գործիչների ընդգրկուելուն ուշ միջնադարում նպաստել են նաեւ հայ բնակչութեան ունեցած մշտական կապերը եւրոպական կեանքին, Եւրոպայի տարբեր երկրներում նրանց բնակութիւն հաստատելու պարագան[3]:

Արդէն իսկ ԺԴ դարում հայ բնակչութեան առկայութիւն է արձանագրւում Մորէայում[4]:

1395 թ. Բարսեղի որդի Անտոնի թողած կտակից յայտնի է դառնում, որ բնակուելով Վենետիկում, նա զբաղուել է հեռաւոր նաւագնացութիւններով[5]: Վենետիկի նաւաշինարանում ու նաւահանգստում աշխատել են հայազգի վարպետներ, իսկ ոմն Եղիայի որդի Պետրոս յիշւում է որպէս նաւապետ (Capitan): Ուշագրաւ է, որ 1484 թ. Մորէայի Սապիենցա կղզում Օսմանեան պետութեան դէմ տեղի ունեցած նաւամարտում Վենետիկեան նաւատորմի երրորդ խմբի առաջնորդն էր Հայ-Աղուան (Armenio Alban) կոչուած անձնաւորութիւնը[6]: Վենետիկում եղել են հայազգի այլ նաւատէրեր ու նաւավարներ[7]: ԺԶ դարում Վենետիկի նաւարանում ջրասոյզ նաւերը ծովի յատակից բարձրացնելու իր յայտնագործած միջոց-

© National Library of Armenia

ներով յայտնի է եղել հայազգի Անտոն Սուրեանը[8]:

Կիլիկեան պետութեան կործանումից յետոյ Միջերկրածովեան աւազանում առաւել յաճախացել է ջուղահայ վաճառականութեան գործունէութիւնը[9]: Նրանք կարեւոր դերակատարում են ունեցել Արեւելք-Արեւմուտք առեւտրական յարաբերութիւններում՝ ունենալով ինչպէս սեփական ծովային նաւեր[10], այնպէս էլ յաճախ դիմելով օտար նաւերի վարձակալութիւնների[11]:

Երուսաղէմի հայոց միաբանութեան անդամ Եղիա Բեթղեհեմցին, 1690-1699 թթ. նուիրակութեամբ այցելելով Իսպանիա[12], Գալիայի եւ Իսպանիայի թագաւորներին է տարել Երուսաղէմի հայոց պատրիարքարանի նամակը, որտեղ խնդրւում էր գերի չվերցնել եւ չստրկացնել բռնագրաւուած նաւերում եղած հայ նաւաստիներին, այլ ազատ արձակել՝ որպէս քրիստոնեայ եւ բարեկամ ժողովրդի զաւակների: Պատրիարքարանի խնդրանքով Իսպանիայի թագաւորին միջնորդագիր էր յղել նաեւ Հռոմի պապը՝ առաջարկելով բաւարարում տալ հայոց պատրիարքարանի խնդրանքին[13]: Օգոստինոս Բաջեցին, իր ճանապարհորդութեան ընթացքում այցելելով Մադրիդ, այնտեղ հանդիպել էր հայազգի մի եպիսկոպոսի, որի մասին ասւում է, թէ «Մէկ հայի եպիսկոպոս[14] կայր այս քաղաքումս. Ա [1]. շաբաթ հետն կացի. Աստուած իւր բարի տայ, խիստ լաւ ընկալաւ մեզ»[15]:

Միջերկրականից Հոլանդիա նաւարկութեան ժամանակ, Ատլանտեանի ափամերձ քաղաքներում առեւտրական գործունէութիւն ծաւալելու պարագայում եւ կամ ուխտագնացութիւնների ընթացքում հայ վաճառականները յաճախ են հանդրուանել նաեւ կադիքսում[16]: Հայերի ա-

Բրանդենբուրգը դիմում է Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիա հարցումով՝ կարո՞ղ է ինքը նրանց վերցնել իր հովանու ներքոյ, որպէսզի նրանք օգտուեն այն բոլոր իրաւունքներից ու արտօնութիւններից, ինչ ունեն ռուսահպատակները: Ստացած դրական պատասխանի հիման վրայ կադիքսում Ռուսաստանի հովանաւորութիւն են ստանում. 1767 թ. – 18 մարդ, 1768 թ. – 20, 1769 թ. – 19, 1771 թ. – 12, 1772 թ. – 25, 1774 թ. – 23, 1783 թ. – 21 մարդ[20]:

Հայազգի նաւավարների կողմից Միջերկրածովեան աւազանից դուրս նաւարկելու եւ Ատլանտեանով դէպի Ամերիկայի նորայայտ մայրցամաք, որ երկար ժամանակ պարզապէս անուանւում էր Նոր աշխարհ կամ Նոր երկիր, ուղեւորուելու մասին առաջին հաւաստի վկայութիւն է ԺԷ դարի ստորեւ հրատարակուող նկարագրութիւնը: Նոր մայրցամաքի գոյութեան ու նրա բնիկների հետ հին աշխարհի յարաբերութիւնների մասին փաստեր յայտնի էին դեռեւս մինչ աշխարհագրական յայտնագործութիւնների դարաշրջանը[21], ուստի միանգամայն տրամաբանական է նաեւ նախորդ դարաշրջաններում այցելուների կողմից այնտեղ դրւոր արձանագրումների առկայութիւնը[22]: Աւելին՝ ԺԶ դարի յայտնագործութիւնները դեռեւս չէին յանգեցրել մայրցամաքի զանգուածային բնակեցմանը եւ աստիճանաբար յայտնագործւում էին մայրցամաքի նորանոր հատուածներ: Հայոց կատարած ճանապարհորդութիւնները դէպի Արեւմուտք պայմանաւորւում կամ թեւերմուտք պայմանաւորւում էին ոչ միայն առեւտրա-տնտեսական, այլեւ քաղաքական, մշակութային ու եկեղեցական խնդիրներով[23]:

ԺԵ դարի վերջերին Մարտիրոս Երզնկացի եպիսկոպոսը, անցաթուղթ ունենալով Հռոմի պապի յանձնարարական նամակը[24] եւ այցելելով Կոմպոստելայի Սուրբ Յակոբ, Իսպանիայի հիւսիսային ափերով հայրենիք վերադարձի ընթացքին կենդարիա (Quetaria) քաղաքում[25] նաւ նստելով եւ 67/68 օր Ատլանտեանում նաւարկելուց յետոյ ափ իջնելով Կադիքսում, բաժանուել է դէպի անյայտ եզերքներ նաւարկելու համար նախապատրաստուած նաւից, 1495 թ. այցելել Սեւիլիա, տեսել Իզաբելա թագուհուն[26] եւ վերադառնալով՝ բռնել տունդարձի ճանապարհը:

Առաւել ուշագրաւ են Մարտիրոս Երզնկացուց հարիւր տարի անց Իսպանիայում ճանապարհորդած Սարգիս Աբեղայի «Ուղեգրութեան» մէջ եղած վկայութիւնները: Սարգիս Աբեղան ոչ միայն գիտի Նոր Հնդկաստանի մասին, այլեւ պատմում է այնտեղ ոսկու առաջացման իր լսած հրաշապատումների եւ այնտեղից դէպի Եւրոպա բերուող հարստութիւնների մասին: Սեւիլիայում «առեւտ քաղքին մեծ գետ մն կայ, նաւեր շատ կանկնել է թագաւորն Իսբանեայու, որ Նոր Հունտուստան գտաւ: Տարին 6 [5] կամի[27] կու գայ, ըստակ ու ոսկի կու բերէ: Այտ այն ոսկին-արծաթ է, որ ինքն իրեն կու բուսանի, զարմանք բան է: Շատ ձի, շատ ջորի, կով, ոչխար կու մորթին, լաշն կու տանին այն տեղն կու ձգին, որ ոսկին-արծաթն կու բուսնի. ան տեղն մեծ մոջիմ կու լինի, մեծութիւնն քանճ շան ճաք, մոջիմներն կու ելին ոսկուն միջէն, լաշն ուտել կու երթան Գ-Դճ [3-400] ճիաւոր կորիչկու երթան, ի մէջն կու մտնուն, վայր ի վեր կու վազեցընեն, ոսկի-արծաթն կու մանորի մինչեւ մոջիմն գայ, մոջիմն լաշն կուտէ ու դառն[այ] գայ իր տեղն, տես[ն]ու մա[ն]տրած է ոսկին ու արծաթն. մոջիմն բան տեղ կու չինէ, կու տանի հեռու տեղ: Կու առնուն ու կու տանի[ն]՝ ի նա-

© National Library of Armenia

ւըն կու լնուն ու կու բերին: Նաւին մեծուխիւնն ԺԲ [12] տապաղա [է], ԺԴ [14] տեղ առագաստ կու բանան, եկեղեցի կայ ի մէջն, պահէզ կայ ի մէջն, ջրհոր կայ ի մէջն՝ քար ու կիր պատած, անձրեւ որ գայ՝ ի մէջն կու լցվի, խասաֆ կայ, եձ [500] նաւավար կայ, Զ [6] ամիսն կու հասնի Սիվիլիա»:[28] Սարգիս Աբեղան անցնելով Մադրիդ եւ տեսնելով, որ «թագաւորն հօն չէր», անցնում է Էսկուրիալ ու գրում է, թէ «թագաւորն ի մօտ գնացի, ողորմուխիւն առի. թուղթ առի, ելայ գնացի Ալխալայ...»[29]:

Առաւել զոյգ ճեւով է արձանագրում Ամերիկայի յայտնաբերման փաստը ԺԷ-ԺԸ դդ. գիտնական Աւետիք Տիգրանակերտցին. «Ի թուին Հայոց ՋԽԶ. [1497] Ամերիգայ նոր աշխարհ գտեալ եղեւ յիտալացի Քրիստափորոս Գօլումպոնէ. յետոյ Ֆլօրէնցացի Ամերիգոս եգիտ զմասունս նորա եւ Ամերիգոս կոչեցաւ ըստ անուան նորա: Սա է ի ներքոյ աշխարհիս՝ հակոտնեայ մեզ եւ մեծ է քան զերիս մասունս, որ այս աշխարհիս բաժինն, որոց տիրէ արքայն Սպանիացւոց եւ կոչի Ենկի Տիւնեայ, որ է Նոր Աշխարհ»[30]:

1882 թ. Հ. Ղ. Ալիշանի հայերէն թարգմանութեամբ «Բազմավէպ» հանդէսում լոյս էր տեսել Հայազգի Տէր Եղիշէ Սարքանկացու ճանապարհորդութեան նկարագրութիւնը իտալերէն բնագրի վերատպութեան հետ միասին, սակայն եւ հետագայում մատնուել անուշադրութեան:

Հրատարակութեանը որպէս «Ազդ» կցած մուտքի խօսքում Ղ. Ալիշանը ճեռնպահ մնալով ծաւալուելու իր հրապարակած Ճանապարհորդի ու Ճանապարհորդութեան շուրջ, ծանուցում է, թէ «Ծանօթ է ամենուն մերազգեաց բազմաշրջիկ սովորութիւնն ալ, ըլլայ վաճառականութեան պատճառաւ, ըլլայ ուրիշ դիտմամբ, եւ աշխարհիս ամեն կողմն ալ գնացող Հայք եղած են անցեալ դարուց մէջ, բայց շատ տարօրինակ երեւցաւ մեզ այս Տէր Եղիշէի ճամբորդութիւնն, որ արժանի համարուած է տպագրութեան՝ գրեթէ երեք դար յառաջ, իտալերէն լեզուաւ. եւ հազուագիւտ ըլլալուն համար եւ նոյն իսկ Իտալացւոց հետաքննելի, կը հրատարակեմք հանդերձ նոյն բնագրով, ընթերցողաց կամաց թողլով որչափ պէտք է հաւատք ընծայեն չհաւատալեաց. չկարենալով ստուգել, ինչպէս որ փափագէինք, գրուածոյն բուն հեղինակը, եւ ի՞նչ նպատակաւ գրելը, եւ Հայու մը ընծայել զայն»[31]:

Տէր Եղիշէի ճանապարհորդութեան մասին շարադրանքը Անանուն գրառողի կողմից ներկայացուած է իր իսկ ճանապարհորդի պատմածների ու նկարագրութիւնների հիման վրայ՝ երրորդ դէմքով: Ակնյայտ է Անանուն գրառողի ձգտումը՝ շարադրելու նախնական ու համառօտ մի տեղեկատուութիւն ճանապարհորդութեան մասին, պահպանելով Ճանապարհորդի կողմից բանաւոր հաղորդումների եւ յայտնած տեղեկութիւնների ճշգրտութիւնն ու հարազատութիւնը: Իտալերէն բնագրում նկարագրութիւններից մէկի առիթով ասւում է, թէ «այս մասին իր (իմա՛ Տէր Եղիշէի – Պ. Ջ.) գլխաւոր պատմութեան մէջ աւելի երկարօրէն պիտի խօսուի»: Ուստի չի բացառւում, որ իրօք ստեղծուած լինի ճանապարհորդութեան նկարագրութեան աւելի ընդարձակ տարբերակ, որը պարունակել է լրացուցիչ տեղեկութիւններ կատարուած ճանապարհորդութեան մասին: Ուշադրութեան արժանի է այն փաստը, որ իտալերէն հրատարակութիւնը եւս տեղի է ունեցել ճանապարհորդութիւնից շատ տասնամեակներ, գուցէ եւ արդէն ճանապարհորդի ու

Անանուն գրառողի մահից յետոյ: Պահպանուած նկարագրութեան հրատարակութեան փաստով ընդգծուել է Տէր Եղիշէի ճանապարհորդութեան այն արժէքն ու կարեւորութիւնը, որ նա ունեցել է իր ժամանակին կատարուած ճանապարհորդութիւնների շարքում: Ճանապարհորդութեան նկարագրութիւնը արժէքաւոր ու վստահելի է դառնում նաեւ իր այն նշումով, որ արձանագրում է ճանապարհորդի ոչ առաջին այցելուն լինելու եւ այդ երկրում իրագործութեան թելադրանքով յայտնուելու փաստը: Ճանապարհորդութեան մէջ իր դարաշրջանին յատուկ երանգով[32] նկարագրում է հիմնականում այն զարմանահրաշը, ինչին վիճակուել էր ականատես լինելու ճանապարհորդին: Այդ առումով ուշագրաւ է հայազգի ճանապարհորդին ոչ միայն որպէս հարուստութեան հետամուտ, այլեւ հնախօս-հետազօտող ներկայացնելու փաստը:

Այդ ամէնով հանդերձ, սակայն, չենք կարող հաստատել, թէ Տէր Եղիշէն ծանօթ էէ եղել Անանուն գրառողի կողմից ստեղծուած նկարագրութեանը, ուստի եւ Նկարագրութեան հեղինակ կարող ենք համարել բուն Ճանապարհորդին եւ նրա հեղինակ պէտք է դիտել նաեւ Անանուն գրառողին:

Ուշագրաւ է, որ այդ նկարագրութիւնը արդէն իսկ ԺԷ դարում գրաւել է հայ ընթերցողի ուշադրութիւնը եւ հրատարակութենից քիչ անց այն թարգմանուել ու վերաշարադրուել է հայերէն: Իտալերէն հրատարակութեան մէջ բացակայում է բնագրի հրատարակութեան թուականը: Այդ բացը լրացնում է Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերից մէկում[33] Ճանապարհորդութեան նորայայտ հայերէն թարգմանութիւնը, որտեղ նշւում է, թէ իտալերէն հրատարակութիւնը կատարուել է 1665 թ., իսկ հայերէնի վերածուել՝ նոյն թուականին, Իզմիրում: Ուշագրաւ է, որ իտալերէն բնագրի paleolog բառը հայ թարգմանիչը ընկալել է-որպէս յատուկ անուն եւ համոզուած է, թէ իտալերէն բնագրում Տէր Եղիշէ (Դոն Էլիզեօ) կոչուած անձնաւորութիւնը նոյն ինքը Ջուղայեցի Բարղամն է, որը «ֆռանկեւար» կոչուել է «Սարքանկ դի Բալալակաւ Արմենի»[34]: Հարկ է յատուկ ընդգծել, որ Ջուղայեցի հայազգի թարգմանիչը իտալերէնից հայերէնի վերածելով տպագիր Նկարագրութիւնը, չի զբաղուել գրագողութեամբ եւ չի թաքցրել Տէր Եղիշէի անունը, այլ ընդամէնը իր ունեցած եւ, իր կարծիքով, հաւաստի փաստերի հիման վրայ նա համոզուած է եղել Տէր Եղիշէ-Բարղամ նոյնութեան մէջ՝ անտեսելով իտալերէն բնագրում առկայ թուականը, որը եւ բացակայում է հայերէն իր թարգմանութեան մէջ: Հայերէնի թարգմանչի համոզումը այնքան խորն է ու ամուր, որ նա այդ Նկարագրութիւնը անվերապահ վերնագրել է «Այս է Աշխարհացոյց Պալալակենց Բարղամն»՝ ընդունելի համարելով անգամ Պալէոլոգ-Պալալակենց անուանման օգտագործումը: Արդեօ՞ք այդ փաստը հիմք էէ ենթադրելու, թէ Բարղամ Ջուղայեցին եւս ճանապարհորդել է դէպի Հարաւային Ամերիկա եւ այցելել Հրոյ երկիր:

Ջուղահայ վաճառականութեան ծաւալած գործունէութեան աշխարհագրական ընդգրկումի մասին Գրիգոր Դարանաղցին վկայում է, թէ «տարածեալ ընդ ամենայն երեսս երկրի ... մինչ ի Հնդիկս ներքինս եւ յԵթովպիա եւ յԵգիպտոս եւ յամենայն աշխարհս Ֆռանգաց եւ ի Կոստանդնուպօլիսս եւ յամենայն աշխարհն Թրակացւոց եւ Գուբեացոցն, որ են Լեհաց եւ Ուռուսաց եւ Մոսկոփաց եւ Վրկանաց եւ ընդ ամենայն աշխարհն Թուրքաց եւ Քրդաց եւ Քաղդէացւոց եւ ամենայն

© National Library of Armenia

Պարսկաստանաց եւ արեւելեայս՝ մինչեւի Զինն եւ Մաւչինն, ի Թօնն եւ ի Թօնչեան եւ յԱնդալիան եւ յամենայն աշխարհին Տաթարաց եւ Ափխազաց, մինչեւ ի ծագս աշխարհաց անծանօթիցն...»[35]: Գրիգոր Դարանաղցին թէեւ դէմ է նման շատաշրջիկութեանը, սակայն եւ համաձայն է իր ժամանակի մտայնութեանը, «եթէ առանց վաճառականից ոչ գոյ հնար լինելոյ ի վերայ երկրի, զի նոցա երթեւեկութեամբն եւ շրջագայութեամբն լինի ամենայն իրաց պատուականաց գիւտից ընդ ամենայն տեղիս»[36]:

Նորայայտ թարգմանութիւնը, որի վերջում թէեւ ընդգծուած է, թէ «էստոնք ոխչ ըստամբուն սուրթին այ», սակայն իտալերէն բնագրից ունի էական մի շարք տարբերութիւններ: Բնագրագիտական համեմատութիւնը պարզում է, որ այդ տարբերութիւնները մասամբ պայմանաւորուած են ինչպէս հայերէնի թարգմանչի կողմից Բարղամ Ջուղայեցու մասին ունեցած տեղեկութիւններով, որոնք, հաւանական է, ժէ դարի երկրորդ կէսին բանաւոր կերպով յայտնի են եղել Անանուն թարգմանչին՝ արդէն իսկ Տէր Եղիշէ Սարբանկացու ճանապարհորդութեան նկարագրութեան հրատարակութեան տարում, եւ մասամբ՝ իտալերէն բնագրի ոչ ճիշտ ընկալումներով կամ իւրովի մեկնաբանութիւններով: Այդ վերաբերում է առաջին հերթին Ուղեգրութեան հեղինակի անուանը, ճանապարհորդութեան թուականին ու ելակէտին, Իսպանիայի թագաւորին այցելելու եւ դեռեւս այնտեղ լինելու[37] մասին նշումին եւ այլն:

Հետաքրքիր է հայերէն նորայայտ թարգմանութեան մէջ այն նշումը եւս, թէ վերադարձից յետոյ Բարղամը ներկայացել է Իսպանիայի թագաւորին եւ պատմել ու գովել այն ամէնը, ինչին ականատես է եղել ինքը: Ճանապարհորդութեան մէջ չի նշւում, թէ ինչպէ՞ս է ստեղծուել արշաւախումբը, ովքե՞ր են հովանաւորել այն, սակայն Իսպանիայի արքունիք այցելելու հնարաւորութիւն ստանալու փաստն ինքնին ուշագրաւ է:

Եթէ հաւատ ընծայուելու լինի Տէր Եղիշէ - Բարղամ Ջուղայեցի նոյնացմանը, ապա դատելով ճանապարհորդութեան իրականացման թուականից, որ առկայ է իտալերէն շարադրանքում (1606 թ.), գուցէ եւ պէտք էր նկատի ունենալ միայն Հին Ջուղայի վաճառականութեանը[38], քանզի այդ թուականին Իսպանիայից ձեռնարկուած ճանապարհորդութիւն կատարելու համար, Բարղամ-Տէր Եղիշէն այնտեղ արդէն փորձառութիւն եւ որոշ վարկ ունեցող անձնաւորութիւն պէտք է լինէր՝ ամենայն հաւանականութեամբ գուցէ եւ դեռեւս անտեղեակ հայրենիքում այդ թուականներին տեղի ունեցած ինչպէս շահաբասեան բռնագաղթի, այնպէս էլ Պարսկաստանում Նոր Ջուղայի հիմնադրման փաստի մասին:

Սակայն Տէր Եղիշէ Սարբանկացու «Ճանապարհորդութեան» նորայայտ թարգմանութեան մէջ թարգմանչի կողմից աւելացուած լրացում-մեկնաբանութիւնները իրենց բովանդակութեամբ միանգամայն հակադիր ու անհամատեղելի են թարգմանուած բնագրին եւ ակնյայտօրէն ցուցադրում են նաեւ միջնադարեան Ուղեգրութիւնների ստեղծմանը ուղեկցող գրական մի յատուկ երեւոյթ, երբ յաջորդ ճանապարհորդները իրենց Ուղեգրութիւններում օգտագործում են նախորդ հեղինակների Նկարագրութիւնները, որը նաեւ մեծապէս դժուարացնում է Ուղեգրութիւնների ուսումնասիրութեան խնդիրը՝ դիւրացնելով վրիպելու հաւանականութիւնը: Նման փաստ հայ ուղեգրական մատենագրութեան մէջ յայտնաբերել եւ արժանագրել էր ակադ.

Լ. Ս. Խաչիկեանը՝ Սարգիս Աբեղայի Ուղեգրութեան իր ուսումնասիրութեան ժամանակ՝ պարզելով Մարտիրոս Երզնկացու Ուղեգրութեան հատուածները Սարգիս Աբեղայի անունով յայտնի ստեղծագործութեան մէջ[39]:

Թէեւ մեզ անյայտ է, թէ հետագայ ի՞նչ ճակատագիր է ունեցել հայազգի ճանապարհորդ Տէր Եղիշէն, սակայն միանգամայն որոշակի է, թէ անհնար է, որ 1606 թ. ճանապարհորդութիւն իրականացրած անձնաւորութիւնը 1665-ին Իսպանիայում սպասէր թագաւորի կողմից օժանդակութեան՝ նոր ճանապարհորդութիւն իրականացնելու համար: Ելնելով այն հանգամանքից, որ ոչ մի հիմք չունենք կասկածի տակ առնելու ինչպէս իտալերէն բնագրում, այնպէս էլ հայերէն նորայայտ թարգմանութեան մէջ եղած թուականների ճշտութիւնը, ուստի մնում է ենթադրել, թէ մենք գործ ունենք երկու տարբեր ճանապարհորդութիւնների արհեստական միաձուլման հետ՝ ճանապարհորդութեան մէկ նկարագրութիւնը մէկ այլ անձի վերագրելու միջոցով: Միաձուլման համար բնականաբար հիմք կարող էր ծառայել ինչպէս Տէր Եղիշէի, այնպէս էլ Ջուղայեցի Բարղամի դէպի Նոր աշխարհ կատարած ճանապարհորդութիւնների փաստը: Ամենայն հաւանականութեամբ, Բարղամ Ջուղայեցու ճանապարհորդութեան մասին բանաւոր աղբիւրներից տեղեակ թարգմանիչը նրան է վերագրել Տէր Եղիշէի ճանապարհորդութեան նկարագրութիւնը:

Չի բացառւում, որ Բարղամը եղել է արդէն Նոր Ջուղայի հայ վաճառականութեան ներկայացուցիչ եւ, հաւանաբար, կապերը չէր խզել իր հայրենակիցներից, ինչի մասին կարող են վկայութիւն հանդիսանալ նորայայտ թարգմանութեան հետ միասին պահպանուած այն տեղեկութիւնները, որոնք բացակայում են իտալերէն տպագիր շարադրանքում: Բարղամը եւ Տէր Եղիշէն այսպիսով, եղել են միանգամայն այլ անձնաւորութիւններ եւ թարգմանիչն է միայն նրանց նոյնացրել՝ Բարղամի մասին իր ունեցած տեղեկութիւնները վերագրելով Տէր Եղիշէին՝ ելնելով միայն նրանց գործունէութեան մասին տեղեկութիւնների զուգադիպութիւնից: Բարղամին վերագրելով Տէր Եղիշէի ճանապարհորդութեան մասին եղած նկարագրութիւնը, Անանուն թարգմանիչը, ըստ էութեան, միաճուլել է իր ունեցած բանաւոր ու գրաւոր տեղեկութիւնները՝ միանգամայն անյայտ թողնելով Բարղամ Ջուղայեցու Ճանապարհորդութեան կոնկրետ երթուղին: Այլ խօսքով՝ մենք գործ ունենք դէպի Ամերիկեան մայր ցամաք ժէ դարում իրականացուած երկու տարբեր ճանապարհորդութիւնների հետ, որոնք կատարուել են հայազգի ճանապարհորդների կողմից:

Վերջին ենթադրութիւնը անհաւանական չէ, քանզի յայտնի է նաեւ, որ Եւրոպական մայրցամաքից դէպի Նոր Աշխարհ ճանապարհորդութիւնը տեւելով 6-12 շաբաթ, արդէն 1600-ական թուականների սկզբին մեծացրել էր Եւրոպայից Հիւսիսային Ամերիկա գնացող գաղթականների հոսքը[40]:

Կարելի է ենթադրել, որ Տէր Եղիշէի պատմածները գրի են առնուել կաթոլիկ հոգեւորականներից որեւէ մէկի կողմից եւ որպէս զեկուցագիր ուղարկուել Հռոմ ու մեզ յայտնի հրատարակութիւնը կատարուել է տարիներ անց Հռոմ ուղարկուած այդ զեկուցագրի հիման վրայ:

Հրոյ երկիր կատարուած ճանապարհորդութիւնների եւ Նկարագրութիւնների հեղինակների շարքում Տէր Եղիշէ անունով անձնաւորութիւն փաստօրէն արձանագրուած ենք տեսնում միայն արաբա-

© National Library of Armenia

լեզու մատենագրութեան մէջ: Ուշագրաւ է, որ հեռաւոր ճանապարհորդութիւնների նկարագրութիւններով հարուստ արաբալեզու մատենագրութեան մէջ ժէ դարի ճանապարհորդական միակ նկարագրութիւնը պատկանում է ասորի հոգեւորական Իլիաս իբն Խաննա ալ-Մաուսիլիին, որը եւս ճանապարհորդել է դէպի Հարաւային Ամերիկա եւ եղել Հրոյ երկրում[41]: Ի. Կրաչկովսկու ենթադրութեամբ, չի բացառւում, որ ճանապարհորդութիւնը իրականացուած լինէր դրամահաւաքութեան նպատակով, սակայն «պապի եւ իսպանական իշխանութիւնների հովանաւորութիւնը խօսում են այն մասին, որ նա կարող էր ունենալ նաեւ յատուկ յանձնարարութիւններ, որոնց մասին, հաւանաբար դիտակցօրէն չի յիշատակում»[42]

Անձնանունների զուգադիպութիւնը Տէր Եղիշէի հետ այս դէպքում թէեւ գայթակղիչ կարող էր լինել երկու ճանապարհորդների նոյնացման վարկածների համար, սակայն անձնանունների այդ նմանութիւնն ու երթուղու մօտաւոր համընկումը այս դէպքում միայն պատահական է, որովհետեւ եթէ հայազգի Տէր Եղիշէի ուղեւորութիւնը տեղի է ունեցել 1606 թուականին, ապա Իլիասի ուղեւորութիւնը Բաղդադից սկսուել է միայն 1668 թուականին: Իլիասը այնուհետեւ այցելել է Երուսաղէմ, եղել Հալէպում, անցել է Ալեքսանդրեա, այնուհետեւ նաւարկել Վենետիկ, Հռոմում ընդունուել է Կղեմէս Թ պապի կողմից, Ջենովայից անցել Մարսել, եղել Իսպանիայում եւ Պորտուգալիայում, որտեղ եւ որոշել է վերջնականապէս ուղեւորուել դէպի Ամերիկա: Մադրիդում ներկայացել է Կառլոս Բ թագաւորին եւ կազմել 1675 թ. փետրուարին ճանապարհուել Ամերիկա: Ամերիկայից նա վերադարձել է 1683 թ., ներկայացել Հռոմի պապին[43], իսկ ուղեգրութիւնը տպագրուել է միայն 1905-06 թթ.[44]: Ուշագրաւ է, որ Իլիասի աշխատութեան մէջ խօսւում է նաեւ մինչ եւրոպացիների կողմից Ամերիկայի յայտնագործումը այնտեղ քրիստոնէութեան հետքերի առկայութեան մասին[45]:

Այցելութիւնների[46] ու գաղթականների հոսքի մեծացմանը զուգահեռ Ամերիկեան մայրցամաքի մասին հաղորդումները աստիճանաբար ձերբազատուել են հրաշապատումներից, ստացել աւելի իրական տեսք ու գործնական բնոյթ: Նման նկարագրութիւններից է, մասնաւորապէս, լատիներէնից Ղուկաս Խարբերդցու կողմից ԺԸ դ. առաջին կէսին հայերէնի թարգմանուած «Սահմանագրութիւն Նոր Ամերիգայի մասին, որ եւ ասի Նոր Աշխարհ եւ Ենկի Տիւնեայ՝ ըստ այլազգացն լեզուն» աշխատութիւնը[47]: Զի բացառւում, որ հետագայ փնտրտուքները ի յայտ բերեն նշուած, իսկ գուցէ նաեւ այլ ճանապարհորդութիւնների մասին նոր տեղեկութիւններ, որոնք հնարաւորութիւն կը տան առաւել լիարժէք պատկերացում կազմել, ինչպէս Ամերիկեան մայրցամաք հայերի ներհոսքի եւ այնտեղ բնակութիւն հաստատելու[48], այլեւ աշխարհագրական յայտնագործութիւններին հայ գործիչների մասնակցութեան վերաբերեալ:

Ստորեւ անփոփոխ պահպում ենք նաեւ Տէր Եղիշէի ճանապարհորդութեան նկարագրութիւնը ըստ «Բազմավէպ» հանդէսում վերատպուած խտալերէն բնագրի եւ Հ. Ղեւոնդ Ալիշանի կողմից կատարուած հայերէն թարգմանութիւնը՝ իր բոլոր ծանօթագրութիւններով հանդերձ:

Dell' Aviso curiosissimo del fortunato camino, di Don Eliseo, da Sarbanga,

Paleologo Armeno

fatto verso la terra di vista, incognita, o del fuoco, con il ritrovamento degli Antipodi, con la discrittione di quei paesi, leggi, culto, vitto, vestito, figura, longhezza di giorni et altre cose curiosissime; mercé d'una Tavola di bronzo fatta dal grande Alessandro, che prima a tanta impresa s'accinse; con loro secreti chimici e medicinali, et altre maraviglie.

Imprimatur. Fr. Aloysius Bariola consultor San.Officii pro Reverendissimo inquisitore: Guglielmus Vidonus theol. Sancti Nazarii pro Ill.mo Cardinali Archiepiscopo. Vidit Saccus. etc.

Quei famosi guerrieri, e prudenti Marinari antichi, emuli del chiaro sole, tra i quali anzi i primi de quali furono, il Colombo, Fernando Cortese, il Pizzaro, il Magagliones, et altri sempre cercarono trovar nuove contrade del Mondo; laonde nacque a' posteri poi si piena cognizione di quello, come del Perù, del Messico, della nuova Francia, e Spagna, et altri infiniti paesi. Ma' tutti questi venuti all'gli ultimi lidi del vasto oceano, quasi altri Alcidi fondarono colonne di pensieri, et in quelle con la mente scrissero, Non più ultra; lasciando a' quelle parti nome di Terra di vista del fuoco et incognita, che per innacessibile la tenevano. Tal intentata strada sì maravigliosa cagiono' a' Don Eliseo da' Sarbanga, Paleologo Armeno, glorioso desio di tentare quelle strade che a nostri Padri tolse o la nebbia del non curarsi o' la luce, di essersi affaticati molto e di volere altresì lasciar a' i Posteri occasione di acquistarsi faticosa gloria.

L'anno dunque del Signor 1606, inbarcatosi con sufficiente provisione in Ragusi, partissi indi il dì ch'in memoria de fedeli defonti si celebra, e passato hor con prospero, hor con minaccievol vento gli ampi golfi de Mari, giunse il di 21 di Marzo, giorno del glorioso Patriarca S. Benedetto, a fronte la terra di vista appo due scogli detti da suoi trovatori antichi los Romeros; ma' non potendo quivi per il reflusso del Mare dimorare lunghe ore, partisi verso l' Isola de Tristan de Acugnas chiamata, ne anco vuole il vento che ivi potessero prender porto, dove trascorse verso il Mare chiamato Machian, a sinistra per cento miglia, in quattro hore.

Quivi, come vuol Iddio benedetto, trovata un (sic) grandissima fiumara, che a sembianza di porto si chiudeva, dove, entrarono a vele piene, e trascorse per trenta miglia a dentro per quella, gli parse essere più magistero d'arte che opera di natura cotesto, cosi buttati li capi a terra; vuole Don Eliseo vedere la novità de paesi, chiamati incogniti; e toltosi compagnia di 20 huomini a cavallo, de Camelli con provione (sic) per due mesi, archibugi, et altre armi, si voltarono verso man dritta dove si vedeva maggior pianura. Hor qui, curioso lettore, apre gli occhi, e ben che la maraviglia nasca da ignoranza. Hora s'hai punto di senno maravigliati il vedere che infiniti furono i travagli, che detto Armeno e suoi compagni passorono hor di fiere, hor di monti, hor di paludi, laghi, hor de mostri, hor perdendo il camino, hor di precipitii, e sempre di mancamento d'alberghi, in modo con gran stento. Era dunque il trentesimo dì che caminava Don Eliseo, privo già di due compagni, uno dei quali fu da un crudelissimo Dragone divorato con il Camello, l'altro per l'altezza d'un monte precipitato dal vento Circio, e di ciò mal contento, ma' più accorto fuggiva i luoghi alti e si andava ristretto quanto si poteva. Hora avenne che il terzo dì dopo il trentesimo, giunse in una larghissima pianura intorno la quale si vedeano vestigia d'alcuni alberghi,

© National Library of Armenia

quivi si ripossarono alquanto; poi con la speranza pur di trovare colà qualche habitazioni, finalmente trovarono molte ruine di fabbriche maravigliose.

Quando viene veduto da un certo Diego, et ad uno detto Caporalino suoi compagni, una tavola di bronzo, d'altezza di trenta piedi, e di larghezza pari, lavorata al d'intorno con cornice, figure, et mascheroni, cui faceva arco a guisa di frontale trionfale con due colonne, un trofeo marmoreo. Don Eliseo che poco discosto si trovava, rifrescandosi a una fontana, che da viva pietra sorgea, inteso questa cosa subito corse colà e scoperte con gran diligenza le lettere con i stili, per il tempo e per le pioggie quasi disfatte, e con infinita allegrezza lesse quelle lettere Greche, che in latino così direbbono:- Glorioe Mag. Alex. Mac. addictum Mausul. qui primus ad Antipod. descendit via invia hoec, vi et arte comperta est faciliter. Revertere, si non es Alex. alter quicumque es. quem aut fortuna, aut prudentia huc te vectavit, facilis descensui, haud et ascendere tutum, absque vulcano, et cerere haud desunt latices...

Dexstera te monet crypta. Questo diceva la scrittura, al cui disotto stavano altre lettere ma' lograte dal tempo non fù possibile poterle intendere in qui (sic) cambio sono i punti...

Crebe a Don Eliseo l'ardire ove mancava la speranza, et intesa la forza della scrittura se soma de rami di Hedera, et d'alberi o allori per suoi bisogni, et a forza di lumi fatta chiara la Grotta, che a man dritta havea trovata, per mezzo della scrittura, senza pensar altro, si mise al dubioso camino. Haveva già il settimo giorno caminato per quella gran Grotta che assimigliarla era l'istessa, o simile a quella che a punta di scarpello fatta da passaggio dalla fumosa Napoli alla vaga Città di Pozzuolo, ma' di lunghezza non haveva comparatione alcuna, poichè per sette giorni non si vedeva anco fine di quella. Haveva Don Eliseo gran copia di lumi; del cibo loro avanzava per puochi giorni, del bere sempre si trovava buone fontane conforme al scritto, Haud desunt latices, talche seguendo il camino parea loro andare all'ingiù quasi a capo chino, ma non passò molto che mancato loro il cibo, furono costretti a dar morte ad un Camello, prestamente arrosto mangiato parte, et parte serbato; trascorsero oltre senza potere giudicare differenza dal dì alla note. Era quasi loro mancata la speranza di vivere, credevansi precipitar nel inferno quando venne loro visto breve forame onde si scorgeva lume chiaro sì ma come vago, e luce d'oro, che gli ravivò la speranza quasi perduta il nuovo splendore; e fatto per quello sicuro Don Eliseo, avviatosi innanzi con frettoloso passo, fù il primo che sul varco della Grotta trascorse, et affiaciatosi come da una fenestra, vide sotto di sè, le spatiose campagne tutte rilucenti di color d'oro; et perchè gli era d'uopo di nuovo scendere all'ingiù, si maravigliarono perchè ove prima havevano le piante, sembravali hare il capo, ne si argomentavano, che facendo tragitto d'angolo, così era necessario.

Hor così venuti a fin di precipitosa calata, trovarono la terra essere di color azurro del cielo, e quasi corpo diafano, per due palmi trasparente in giù, le sue herbe sembravano il color dell'oro, non dico per similitudine ma'per essenza, e così erano le fronde delli alberi, e le spiche del frumento di quei paesi, che le chiamò spiche per la sembianza che tengono con le nostre spiche, ma di grandezza ogn'acino vaco o granello avanza una nizola, et ogni spicha ha'mille di quelle, e pare che la natura l'habbia miniate d'oro, che apunto come miniate d'oro rilucono, sono i frutti lucidi dall'uncanto all'altro, benchè di spetie differenti delli nostri, tra li quali ve ne sono alcuni che tengono in sè sculpita l'humana figura che pare la natura havesse volu-

to in quelle parti mostrarsi madre curiosa dell'huomo, l'herbe havevano in sè scritte alcune di quelle note che a gli hebrei segni rassomigliavano, che non si puote conoscere che si fosse per all'hora. I fiumi non acqua ma argenti vivi ne menano, se forse l'acqua per la perfettione della terra e per la vitima (sic) presenza del sole non sembra tale in faccia qual non è in cuore, regionando metaforico. Altre acque puoi sono, che credo nasca dall'indorate arrene, come il mare Negro e Rosso dalle negre e rosse arrene si vede e si chiama, o maraviglia della natura! I pesci a squadre dorate argenti e quasi di malte colorite, varcano gli ampi mari. Et avvertano i lettori che quà non si favoleggia, ma il tutto nasce da perfettion d'aere che il tutto vorebbe trasmutare in oro. E se nelli nostri paesi, e più in Taranto, d'orate tale si chiamano per essere dipinte d'oro, che maraviglia sia dunque se in quei luoghi, di più vivo coloro d'oro i pesci si veggono? Gli altri animali, che per le selve albergano, non sono di peli vestiti ma' nudi di peli, mostrano di stellata pella il petto e l'tergo vaghi e riguardevoli. La terra poi qui non si coltiva, ma' da per se cadendo le prime semenze apportano le seconde, che da noi l'erbe nascono che selvaggeo, o silvestri si chiamano, non fà bisogno arrare la terra, perchË da contimui Terremoti, benchè non perigliosi, la terra viene per tutto sussurarsi, e sembra ch'l vento gli giova per arratare.

Quivi per un anno continuo, che detto Eliseo vi dimorù, non vide pioggia giamai, ma' il cielo è si copioso di ruggiada, che al dimane si potrebbe corre con i vasi in abbondanza; è quello che più importa altra acqua non si beve che detta ruggiada, il cibo e il detto formento, ma' cotto solo, senza altra mutatione sotto le braggie, quali non hanno altrimenti il color di fuoco rosso ma' bianco, come il cielo all'apparire dell'aurora; onde par che sia piutosto fuoco elementare, che artificiale; i pesci sono da essi cotti al sole; da esso dico che in quei luoghi albergano, de quali si dirà ultimamente. E carne non mai vidde mangiarne, hanno sì bene uso mangiar un herba che li conserva senza fame e sete per giorni venti, e fu per Don Eliseo provata, e trovata vera. Questa la chiamano Bec, e crede detto Armeno che ne sia per il nostro mondo, benchè non conosciuta, di qui (sic) non si ragiona per altra occasione serbandola.

Il vestito o' è di pelle di pesci, che sono come cuoi Atlanti, et alle volte vanno nudi, conforme i tempi. Non portano armi, fuor che alcune spine di quei pesci, ma' che ad uso no le portano non si seppe, e si ornano delle squame loro facendone come un trofeo, e tutta la loro vaghezza è in quello. Della loro adoratione o culto non si puote altro investigare, se non che a tempi determinati vanno a piedi d'un altissimo monte, e quivi uniti insieme gridano con voce tant'alta, che assordirebbero il mondo; quello che dicono non s'intende, benchè s'udivano queste parole o note: Barlaae, Sec, Trifae, et altre; poi tornano a casa, et mangiata di quell' herba già detta di sopra stanno senza mangiare venti dì continui. Le loro case sono d'ossa di pescifatte, et coperte Cinti (?) di certa missura, che non si pote conoscere. Hanno un capo, che si conobbe che tutti gli facevano riverenza, andandogli incontro, con un pie solo, et l'altro non toccandolo in terra e salutandolo col capo alla dritta inchinato; il cibo di che pascano questo loro signore è molto dagli altri differente, che quivi lo porrù per essere miracoloso secretto loro, et a questo di non poca consideratione pigliano una quantita del loro oro, e non manco di libre sei che si conobbe al peso bene s'l'occhio non ingannù, e postolo in infusione d'un certo licore a sembianza del nostro vino, di qui (sic) si dirà appresso, e lasciato ivi per spatio di 12 hore, vi aggiun-

© National Library of Armenia

gono una semenza, una radice, et un'herba, quali furono da detto Armeno vedute e conosciute appo noi per famigliare è d' alauna consideratione, ma'non per questo effetto, e postole poi in un vaso come a lambico fatto di legno ma' incorrutibile come osso o marmo gli danno lento calore, e di quello ricevendo l'anima chimica l'usano per vitto del loro signore, che è maravigliosa e per allungare la vita e rinovar la vecchiaia, e cadente età; il che anche usano coloro, che sono giunto al fine degli anni giovanili, che con stupore si rinovano, altre Fenice; il licor di cui invece di vino si servono e suco cavato d'erbe, che hanno i granelli come il nostro solatro maggiore, se pur non è l'istesso di cui pongono la radice in detta infusione, la semenza è chiusa in una corteccia come di noce vomica, ma' cinta di spine curte e tondette alquanto, a somiglianza dello stramonio se pur non e desso; e l'herba ha le fronde come di ferro di lancia, che noi la chiamiamo chinoglossa in greco commune, et in volgare lingua di cane s'non si erra in quest'herba sola; e questo, credo sia quell' anima dell'oro che multiplica una mille d'ogni metallo, benchè vile, questa si crede quella chimica ruggiada di cui disse: De rore coeli et de pinguedine terre fit lapis noster. E trascorrendo alli loro ordini riti e leggi si osservù puoca cosa, ma per quanto si vidde, haveano regole di natura, e si congiungono, con le donne per il tempo che non sono gravide, usare poi con loro sorelle sarebbe pena di morte, in questo modo gli danno tando da bere a viva forza, che affogati, o crepati si muoino, e questo usano in dar morte; e questo sia brevemente detto. Di quanto diremo adesso della lunghezza de lor giorni; il loro giorno non è più di quattro hore delle nostre l'estate, e dodici l'inverno, e sei ogni equinottio; le raggioni sono chiare, ma per lasciar occasione di filosofare si tacciano. Le stagioni non hanno mutatione, che sempre

fiorisce la terra ne di freddo, si teme, ne di neve, et in somma si puù chiamare, una continua primavera, perchè il calor del sole qui è in perfettione, poichè sopra il nostro zenit, il sole fà contra la sua natura di mandare i raggi in giù, poichè: Omne leve tendit sursum, e così ogni picciol impedimento o di nube o di vento o di pioggia l'impedisce del suo corso, ma'stando nel nadir manda i raggi all'insù, e così la detta ragione naturalmente procede alli suoi favori; ma di questa nella principale sua historia si ragionerà più ampiamente.

Resta a dire della loro figura, e del modo con che riceverono il detto Don Eliseo, e compagni. Per cominciar dunque dal primo, dico che erano d'altezza di palmi trè il più grande, il nascere di uno di quei di curta statura di due o di due e mezo; gli capelli a guisa di lana ma in color d'oro, e i vecchi di fino argento sembrano, e tale le ciglia e gli altre parti; il naso aguzzo come un pugnale, che tal'hora feriscono con quello; gli occhi sono rossi cuome fuoco vivo; il loro colore è come il nostro formento ma più chiaro, l'unghie son tonde, et elevate come le pietre stellites segnate, e questo per la simpatia che vengono conesse le stelle per havere il moto sursum come è detto del sole; i piedi sono tondi senza fessura apparente o divisione in dita, ma' si bene si vede insegne di quelle, ma'non è tanta ritondezza che paia strano; del resto osservano alcune cerimonie nell'andare, che paiano avere qualche elevato giuditio, si regolano per ordini tra essi segnati, de quali non si fa per adesso mentione per brevità. Resta a dir il modo con che fù ricevuto, detto Don Eliseo, ristretto con i suoi compagni, se ne gira mirando le meraviglie, e passendosi di frutti della Terra, quando visto una quantità di Capanne fatte d'osso di pesci, e mistura, come dicemmo, si posero in armi ma' non fù d'huopo combattere, che veduti degli habita-

